



Հ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՅԱԽԱՅՔԱՐ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՂՈՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԱՌՈՏ
ԱԿՆԱՐԿ

Յախացքար վանքը Հայաստանի հնագույն մենաստաններից է և հանդիսացել է Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկը: Պատմական աղբյուրներում «բարձրահռչակ և սուրբ առաքինարան», «Հրեշտակաբնակ սուրբ ուխտ» և այլ բազմանշանակ անուններով է կոչվում, ինչպես և հավասարազոր նշվում է Տաթևի ու Ամաղու Նորուվանքի մեծահռչակ վանքերին:

Յախացքար վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանում կամ պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառում: Վանքը տեղադրված է Եղեգիս գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, բարձրավանդակաբարձրաբլուզի վրա: Այդ գյուղը հնում կոչվել է Արտաբույնք, որն ավելի ուշ ձևափոխվել-դարձել է Էրդափին, իսկ այժմ վերակոչվել է Եղեգիս՝ նրանից ոչ հեռու գտնվող՝ Վայոց ձոր գավառի երբեմնի վարչական կենտրոն հանդիսացող Եղեգիս գյուղաքաղաքի անունով:

Մատենագրական, վիմագրական և հիշատակագրական աղբյուրներում տարբեր ձևով է կոչվում վանքը.—Յախացքար, Յախաքար, Յաղացքար, Յաղաց քար, Յաղաց քար. գրականության մեջ ավելի գործածականը «Յախացքար» ձևն է, ուստի մենք էլ կգործածենք այդ ձևը: Բացի այդ, վանքը բաղկացած լինելով կառուցվածքների երկու առանձին խմբերից, տեղացի բնակիչների կողմից կոչվել է նաև Ղոշա (զույգ) վանք:

Թե երբ է հիմնադրվել Յախացքար վանքը, ստույգ


հաշտնի չէ. պատմական աղբյուրներում հիշատակվում է Ե դարից՝ Վարդանանց պատերազմի կապակցությամբ: Ստեփանոս Օրբելյան պատմիչը տեղեկացնում է, որ Վարդանանց պատերազմի՝ Ավարայրի նշանավոր ճակատամարտի անհաջող ելքից հետո, հայոց բանակի մի զորախումբ, Մարտիրե զորավարի գլխավորությամբ, ցանկանում էր Վայոց ձոր գավառի վրայով անցնել Արցախ նահանգը: Բայց որովհետև հայկական այդ զորաբանակին հետապնդում էր պարսկական մի զորախումբ, ուստի այդ երկու զորախմբերի միջև Վայոց ձոր գավառի սահմաններում չորս խոշոր ճակատամարտեր են տեղի ունենում (հնագիտական հետազոտությունները որոշակիորեն պարզել են այդ ճակատամարտերի և նրանցում զոհված հայ մարտիկների մարմինների թաղման վայրերը): Չորրորդ ճակատամարտը տեղի է ունենում Արտաբույնք գյուղի և Յախացքար վանքի մոտակայքում. ահա թե ինչ է գրում այդ մասին պատմիչը.

«Եւ անդ ասպատակ եղեալ հասին և երեք հարիւր արանց ի չրկիցն որ Ոստիքն կոչի և Արտաբույնք, և անդ զնոսա խողխողեցին, որոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի ի բնակչաց տեղեացն:

Եւ անտի սակաւ մի անցեալ Պարսկացն ի ձորադուռն սուրբ Յախացքար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մեջ սահմանաց երկուց գեղջն, որ վերոյ ասացաք, և անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց»¹:

¹ Պատմութիւն նահանգին Սիսական.—արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 69—70:

Շրջանային կենտրոն հանդիսացող Եղեգնաձոր ավանից դեպի Ալալազ գյուղը (պատմական Եղեգիս գյուղաքաղաքը) գնացող ճանապարհորդը, Շատին գյուղից ոչ հեռու, ճանապարհի եզրին, իրոք Արդաբույնք (Եղեգիս) և Ոստինք (Հոստուն) գյուղերի



Նկ. 1. Յախացքար վանք.—Արևմտյան խմբի ընդհանուր հատակագիծը

ջրաբաժան վայրում այժմ էլ կարող է նկատել այն եկեղեցու ավերակ շենքը, որը կառուցել էին տեղի բնակիչները այն հայ հերոս մարտիկների գերեզմանների վրա, որոնք իրենց կյանքը զոհեցին հայրենիքի ազատության ու անկախության համար պարսիկ նվաճողների դեմ մղած պայքարում՝ երրորդ ճակատամարտում։ Իսկ Եղեգիս գյուղից ներքև, խաղողի այգիների մեջ, Յախացքար վանքից ոչ հեռու, պահպանված է դարին վերաբերվող հնագիտական բեկորները և դրանց կից հետազայում կառուցված փոքրիկ մատուռը վկայում են. «Անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց»՝ պարսիկների հետ ունեցած չորրորդ ճակատամարտում զոհված հայ քաջարի մարտիկների թաղման վայրի մասին։

Դրանից հետո ոչ մի տեղեկություն չկա Յախացքար վանքի մասին մինչև Ժ դարը։ Ննչ վիճակի մեջ է եղել վանքը Ե դարից մինչև Ժ դարը, պարզ չէ։ Այն հանգամանքը, որ հնագիտական հետազոտությունները տեղում չեն հայտնաբերել այդ միջանկյալ ժամանակաշրջանին վերաբերող որևէ մնացորդ, ենթադրել է տալիս, որ վանքի սկզբնական կառուցվածքները ավերված լինեն արաբական արշավանքների ժամանակ, հավանաբար նրա առաջին շրջանում։

Ստեփանոս Տարոնացի պատմիչը խոսելով Աբաս Բագրատունու թագավորության ժամանակ (Աբաս Ա, 930—952) Հայաստանում կատարված շինարարական աշխատանքների և երկրում կառուցվող վանքերի մասին տեղեկացնում է, որ Յախացքար վանքը

կառուցել է Տեր-Ստեփանոսը «...և Յախացքար և Վաղոց Ջորի ի ձևոն հօր Ստեփանոսի»²։ Վանքի ա. Հովհաննես եկեղեցու վրա պահպանված 989 թվականն էլ ինքնին վկայում է, որ այդ ժամանակ գոյություն ունեւ էր շենքը և շենք էր վանքը։

Այնուհետև Յախացքար վանքը հիշատակվում է ԺԱ դարում. նույն Ստեփանոս Օրբելյանը թվելով Սյունյաց նահանգում գոյություն ունեցող վանքերը, Վաղոց ձոր գավառում՝ ի թիվս մի շարք այլ վանքերի նշում է նաև Յախացքար վանքը, ասելով. «Յախացքար՝ բարձրահուշակ և սուրբ առաքինարան յորում ի 490 (1041) թվականին ի թագավորութանն Գագկայ, հայր ոմն Վարդիկ անուն շինե պաշտոն եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբեթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիսն սագաշեն, հրաշալի յօրհնումովք»³։

Վանքի վրա փորագրված մի արձանագրության համաձայն (արձանագրություն ԺԹ) Յախացքար վանքի առաջնորդ նույն Վարդիկը 1061 թվականին Զաքարի որդի Վարդից մի այգի և հողաբաժին է ստանում՝ ի նվեր Յախացքար վանքի։

Վանքի վրա փորագրված մի այլ արձանագրություն էլ հավաստում է (արձանագրություն Է), որ Յախացքար վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետը 1222 թվականին վերանորոգել է վանքի ա. Աստվածածին եկեղեցին։ Իսկ վանքի վրա փորագրված մի ուրիշ արձանագրության համաձայն (արձանագրություն Դ) Սմբատի որդի Գրիգոր իշխանը, որը Ոստինք գյուղի (այժմ Հոստուն գյուղը Եղեգնաձորի շրջանում) տերն էր, 1211 թվականին երկու թառակ այգի է տնկում և նվիրում Յախացքար վանքին։

Այդ նույն ԺԴ դարին վերաբերող Յախացքար վանքի մասին հաջորդ տեղեկությանը մենք հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի մոտ, ըստ որի իշխան Տարսաին Օրբելյանը Գեղարքունի գավառում գտնվող իր ժառանգական սեփականությունը կազմող Գառնակեր գյուղը և մի այգի էլ Մանուկ (կամ Մճուկա) ձորում՝ նվիրում է Յախացքար վանքին. անհրաժեշտ ենք գտնում մեջ բերել Օրբելյանի այդ վկայությունը.

«Սա (Տարսաին Օրբելյանը—Հ. Ե.) շինեաց Եկեղեցիս, և արար բազում արդիւնս ի վանորպս. ետ և ի վանն Յաղացքարոյ՝ գիւղ ի Գեղարքունի գԳառնակերն. և այգի մի ի Մանուկայ ձորի, և գրե ինքեան արձան ի վերս սրբոյ Կարապետին. և կարգէ պատարագս երիս՝ ամ յամէ. և փակէ անագին նզովիս զի մի խախտեսցեն զհոգեցատուրն զայն»⁴։

Տարսաին Օրբելյանի վերը մեջ բերված նվիրատվության մասին իրոք արձանագրված է ա. Կարապետ եկեղեցու վրա (արձանագրություն ԺԴ)։ Այս արձանագրության տարեթիվից պահպանվել է միայն հարյուրավոր թվանշանը՝ 2. (700), իսկ մյուս՝ տաս-

² Ստեփանոս վարդապետի Տարօնեցոյ, Տիեզերական պատմութիւն. Փարիզ, 1859, գլ. Գ, էջ 162։

³ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 339—340։

⁴ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 424—425։

նավոր և միավոր թվանշանները խիստ եղծված լինելու պատճառով անընթեռնելի են, ուստի որոշակի կերպով պարզ չէ այդ արձանագրության փորագրման ճիշտ ժամանակը: Բայց քանի որ Տաթևին իշխանը Սյունիքի կառավարիչ է դարձել 1251 թվականին և վախճանվել է 1290 թվականին, ապա դրանից էլ հետևելու է, որ վերը նշված արձանագրությունը պետք է փորագրված լինի 1251—1290 թվականների ժամանակամիջոցում, որի ընթացքում նա կատարած պետք է լինի՝ արձանագրության մեջ նշված նվիրատվությունները Ցախացքար վանքին:

տիեզերաքարով լուսավորչին, որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպառազեն մենամարտիկ զինաորի Ջալալին, թոռն մեծ աթաբակին Հայոց և Վրաց վեհ Տաթևյիճին, տեր և վերատեսուչ գահերեց և զլուխ արհիերից Աթոռոյս Սինեաց Տաթևոյ և Նորավանից և Ցախացքարոյ, պետ երկուտասան զառառաց, ուրախ եղև իբրև ընծայ ի վերուստ առաքել...:

Եւ այդ, եւ՝ նուաստ եղկելի թշուառացեալս Ստեփաննոս... աղաչեմ... յիշել զգեղաշէլ և զարեգակնափայլ եղբարն իմ զպարոն Շահնշահ...: Նաև յիշել զճնողսն իմ՝ զհայրն իմ Ջալալ և զմայրն իմ զամեն-



Նկ. 2. Ցախացքար վանք.—Արևմտյան խմբի ընդհանուր տեսարան արևելքից

Ցախացքար վանքի մասին հաշորդ տեղեկությունը, որը վերաբերվում է ԺԴ դարին, պարունակում է վանքի վրա փորագրված մի արձանագրություն (արձանագրություն ԺԸ), որի համաձայն Պողո իշխանի թոռ, Հասանի որդի Էաշին իր ժառանգական սեփականությունը կազմող Սրկղունք գյուղում եղած իրենց նորատունկ այգին 1317 թվականին նվիրում է Ցախացքար վանքին:

Այնուհետև Ցախացքար վանքը հիշատակվում է 1331 թվականին գրած մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանում, ուր հավասարության նշան է դրվում այդ ժամանակ գոյություն ունեցող և խոշոր ու նշանավոր կրոնական և ուսումնա-կրթական կենտրոններ հանդիսացող Տաթևի և Ամաղու Նորավանք վանքերի միջև. ահա այդ հիշատակարանը.

«...Առետարանս ի ձեռն ուրումն երեք յաշխարհն Հայոց, գրեալ ոսկեզած որակաք ի Դրագարկն ձեռամբ Թորոս փիլիսոփայի, զոր տեսալ տեսոն Ստեփանոսի՝ հզար և իմաստուն գիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Եապեալ

արհմեալ Գոնցան, և երկար կենդանութիւն խնդրել երկուց եղբարց իմոց՝ պարոն Էլիկումին և Աղբորդային: Եղև մեզ այս բառք տրտմագին ի տանի զատկին. ի 22 թվ. (1331)»⁵:

Ապա Ցախացքար վանքի մասին հիշատակվում է 1367 թվականին վանքի վրա փորագրված մի այլ, ընդարձակ արձանագրության մեջ (արձանագրություն Թ):

Հետագա և վերջին տեղեկությունները Ցախացքար վանքի մասին վերաբերում են ԺԵ դարին: 26այած թուրք-թաթարական անընդհատ շարունակվող արշավանքներին, որոնք անասելի աղետալի հետևանքներ ունեցան ողջ երկրում, Ցախացքար վանքը դեռ շարունակում էր պահպանել իր գոյությունը: Այդ մասին են վկայում նույն վանքում 1437 և 1463 թվականներին գրված շարականի ու Ավետարանի՝ Ցախացքար վանքի անցյալ պատմությանը վերաբերող այնքան

⁵ Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան, 1950, էջ 231:

հետաքրքիր ու կարևոր փաստաթուղթ հանդիսացող հիշատակարանները, որոնք մեջ ենք բերում ստորև, հաջորդաբար.

«...Ավարտեցի (Շարակնց) դառն և ի նեղ ժամանակիս, որ տիրեալ էր աշխարհիս Հայոց ազգն թուրքման, որ և զամենայն աշխարհս ի սուր և ի սով և ի գերի մաշեաց, որ ոչ ուստեք ունէւք մխիթարութիւն...»

Գերեցան գիրքս ի գաւառիս Եղեգեաց, ի վանքս Ղաղացքար, ընդ հովանեա կենսաբեր սուրբ նշանիս, և ի լաւ և լընտիր արիւնակէ Խլկցի, ձեռամբ Մատթէոս քահանայի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց... ի թլին Հայոց ՊԶԶ (1437)»⁶:

«Աւետարան գրել ի վանս Տաղաց-քար՝ ի Վայոց-Չոր գաւառի, ընդ հովանեա սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետիս երկնանման կաթողիկէի, ի թոյին Հայկազեան տումարի ԶԺԲ (1463), ի կաթողիկոսութեան Տեր Զաքարիայի՝ Բ ամ, ի դանութեան Զհանշահին՝ ԽԿ ամ»⁷:

Դրանից հետո ոչ մի հիշատակություն չկա Յախացքար վանքի մասին, ուստի հայտնի չէ, թե երբ է ավերվել այն ու դադարել՝ որպես մենաստան գոյություն ունենալուց: Վերջին դարերի ճանապարհորդներն ու տեղագիրները վանքը գտել են ավերված ու լքված վիճակում:

Բ. ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՍԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յախացքար վանքը կամ Ղոշավանքը բաղկացած է հուշարձանների երկու առանձին խմբերից, արևելքից արևմուտք դասավորությամբ, քառորդ կիլոմետրաչափ միմյանցից հեռու:

Արևմտյան խումբ

Հուշարձանների այդ խումբը, որը համեմատաբար բարձր դիրք ունի և գտնվում է խորունկ ու ընդարձակ ձորի եզրին և ամենահինն է, բաղկացած է երկու եկեղեցուց, մեկ գավթից, երկու սրահից, մեկ մատուռից, երկու ձիթհանից, պարսպապատ է, կից տարածվում է փոքրիկ գերեզմանոց (նկ. 1): Չնայած վանքը պատմական աղբյուրներում հիշատակվում է Ե դարից, սակայն տեղում պահպանված կառուցվածքները Ժ դարից այն կողմ չեն անցնում:

1. **Աստվածածին եկեղեցի.**—Վանքի այդ խմբի գլխավոր եկեղեցին է. կառուցման ճիշտ ժամանակը որոշ չէ, սակայն վերը մեջ բերված Ստեփանոս Տարոնացու վկայությունից պարզ է դառնում, որ եկեղեցին պետք է կառուցված լինի Արաքս Ա Բագրատունու թագավորության ժամանակ՝ 930—952 թվականներ

ժամանակամիջոցում: Հուշարձանի կառուցման նարտարակետական ձևերը նույնպես ապացուցում են, որ այն անվիզնիորեն վերաբերում է Ժ դարին: Դրանից էլ հետևում է, որ Յախացքար վանքի սկզբնական կառուցվածքները հիմնովին ավերվել, վեր են ածվել փլատակների ու ծածկվել հողի հաստ շերտով, և այդ փլատակների վրա կառուցվել է ներկայիս վանքը:

Աստվածածին եկեղեցու շենքը կենտրոնացմբ է ձևի մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաքուստ քիչ երկարաձիգ, ուղիղ քառանկյունի ձև ունի, իսկ ներսից՝ շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների, հատակագիծը ստացել է խաչաձև տեսք՝ կիսակլոր խաչքներով: Արևելյան խաչքնում տեղադրված է ցածրիկ բնոք:

Արևելյան կողմի խորանների հատակագիծը եռկարաձիգ, ուղիղ քառանկյունի է, դրանցից հարավ սյուն կողմի խորանի դուռը բացվում է դեպի արևմուտք, եկեղեցու այդ կողմի խաչքի մեջ, իսկ հյուսիսային կողմի խորանի դուռը՝ դեպի հարավ, արևելյան արքիդի մեջ, բնոքի վրա: Արևմտյան կողմի խորաններն արևելյան արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արքիդներ, նրանց մուտքերը բացվում են եկեղեցու արևմտյան խաչքի մեջ՝ իրար դիմաց:

Երկու մուտքերից մեկը բացվում է դեպի արևմուտք, իսկ մյուսը՝ դեպի հարավ՝ համապատասխան խաչքների կենտրոնական մասերի՝ այդ կողմերում գտնվող սրահաձև գավթիների մեջ:

Վեց լուսամուտներից մեկական հատ բացվում է հուշարձանի արևելյան և արևմտյան խաչքների վերի մասերից, ըստ որի արևելյան խաչքնում բացվող լուսամուտը խիստ բարձր է ու լայն, իսկ արևմտյան խաչքնում բացվող լուսամուտը ցածրիկ է ու նեղ: Մեկական շատ փոքր լուսամուտներ էլ բացվում են սամուտը խիստ բարձր է ու լայն, իսկ արևմտյան խորանների արևմտյան կողմից: Արևելյան արքիդի և դրան կից խորանների պատերում փորված են դարակաձև փոքր խորշեր՝ ոմանք ուղղանկյուն, ոմանք կամարակապ գազարով:

Ներսից, խաչքների միացման անկյուններից ձեգվող կիսապուրկները միանալով կամարներով իրենց վրա են կրել գմբեթը:

Եկեղեցու շենքը 1222 թվականին վերանորոգել է վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետը, ինչպես այդ մասին վկայում է վանքի վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն է):

Հուշարձանն ավերակ վիճակում է. ամբողջովին քանդված է գմբեթը, ծածկը, արևելյան արքիդի կոնիխ տանիքը, հյուսիս-արևելյան պատը և անկյան խորանի արևելյան և հյուսիս-արևմտյան անկյան խորանի հյուսիսային պատը: Կանգուն մնացած մասերը շարված են տեղական զանազան հանքաքարի տարբեր մեծությամբ անմշակ քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

2. **Գավթիք.**—Գտնվում է Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, նրան կից: Խիստ երկարաձիգ ու նեղ, սրահաձև մի կառուցվածք է, ամբողջովին ավերակ վիճակում, պահպանվել է միայն հյուսիս-

⁶ Լ. Ս. Խաչիկյան, Ժ-Ե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 472—73:

⁷ Լ. Ս. Խաչիկյան, նույն տեղ, մասն երկրորդ, էջ 195—96:

յին պատը, որի վերին քարաշարերը նույնպես քանդված են, և մյուս պատերի հիմնամասերի որոշ հետքեր: Հյուսիսային պատի մեջ, ներսից բացվում են հինգ լայն ու խորը կամարակապ մեծ խորշեր: Այդ խորշերը բաժանող ելուստապատերի ծայրերից ձգվող ամուրները և նրանց ծայրերին պահպանվող կամարաձև քարերը վկայում են, որ գավթի ծածկը եղել է թաղակապ, և որ հարավային պատի մեջ նույնպես բացվելիս են եղել նույնաձև և նույն քանակի խորշեր՝ իրենց անջատող ելուստապատերով ու ամուրներով, իսկ վերջիններս միացած են եղել ծածկի թաղը գոտկալ կամարներով: Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ պատի կենտրոնական մասից:

Հուշարձանի կանգուն մնացած մասերը, ընդհանուր առմամբ, շարված են անմշակ որձաքարերով՝ կրաշաղախի միացությամբ, իսկ պատերի մեջ բացված խորշերի եզրերն ու կամարները, ինչպես և արևելյան պատի արտաքին երեսապատի որոշ մասերը շարված են մարուր տաշված որձաքարերով:

Թե երբ է կառուցվել այդ հետաքրքիր շենքը, ստույգ հայտնի չէ: Այն հանգամանքը, որ դա կից է աստվածածին եկեղեցու շենքին և կառուցելիս փակվել է եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյան խորանի՝ դեպի արևմուտք բացվող լուսամուտը, ինքնին վկայում է այն մասին, որ գավթի-սրահը կառուցվել է եկեղեցուց հետո, սակայն ամենայն հավանականությամբ ոչ ուշ, քան մինչև ԺԲ դարը: Հուշարձանի քանդված մասերը փլատակների ձևով թափված են տեղում:

3. **Երկու սրահներից մեկը** գտնվում է Աստվածածին եկեղեցու հարավային կողմում, կից՝ նրա ամբողջ երկարությամբ: Սրահներին բնորոշ և հատուկ ձևով կառուցված այդ շենքը հյուսիսային կողմից առանձին պատ չունի, այլ եկեղեցու հարավային պատին՝ կից ձգվում են հինգ ուղղանկյուն որմնամույթեր, որոնք միանալով որմնակամարներով, պատի վրա առաջացնում են լայն խորշեր: Հարավային կողմից ամբողջական ներփակ պատի փոխարեն ունի երեք կամարակապ մեծ բացվածքներ ունեցող պատ: Արևմտյան կողմից բոլորովին պատ չունի, այլ կամարակապ բացվածք է՝ սրահի ամբողջ լայնությամբ:

Սրահի արևելյան ծայրում կա մի փոքր քառակուսանի տարածություն, որը հատուկ միջնորմով անջատված է ընդհանուր սրահից և վերջինիս հետ հսկողակցվում է միջնորմի մեջ բացված փոքրիկ մուտքով: Այդ քառակուսան մասի արևելյան պատի մեջ բացվում է մի փոքրիկ լուսամուտ:

Հուշարձանի ծածկը թաղակապ է, հյուսիսային կողմի որմնամույթերից ձգվող կամարների ծայրերը հենվում են հարավային պատի մեջ ագուցված կալուցակների վրա, միաժամանակ գոտկելով ծածկի թաղը կամ առաստաղը:

Ամբողջ շենքը շարված է մոխրագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

Կանգուն է՝ մասնակի քանդումներով: Այս հուշարձանի կառուցման ժամանակը, ինչպես և կառուցողները նույնպես հայտնի չեն:

4. **Ս. Հովհաննես եկեղեցի.**—Գտնվում է վերը նկարագրված հուշարձանների հարավային կողմում, հարյուր սրահի ամբողջ երկարությամբ և նրանից անջատվում է պարսպի դարպասի ընդհանուր սրահով: Կառուցման վերաբերյալ որոշակի տեղեկություն չկա:



Նկ. 3. Ցախացքար վանք.—Ս. Կարապետ եկեղեցին արևելքից

սակայն նրա արևելյան պատի արտաքին երեսի վրա փորագրված ՆԼԸ (989) թվականը ենթադրել է տալիս, որ եկեղեցին պետք է կառուցված լինի հենց այդ թվականին:

Յուրահատուկ ձևով կառուցված այդ շենքը ունի երկարաձիգ ուղիղ քառանկյունի հատակագիծ, ծածկը թաղակապ է, արևելյան ծայրում ունի կիսակլոր արսիդ: Երկու խորանները, որոնք ունեն ուղիղ քառանկյունի հատակագիծ և առանց արսիդի են, տեղադրված են հարավային պատին կից՝ նրա արևելյան և արևմտյան ծայրերում, այնպես որ նրանց արանքում, հարավային պատի կենտրոնական մասի հավասարությամբ գոյացել է մի լայն, կամարակապ մեծ խորշ: Երկու խորանների մուտքերն էլ բացվում են դեպի հյուսիս. արևելյան խորանինը՝ արսիդի մեջ, իսկ արևմտյան խորանինը՝ եկեղեցու, վերջինիս արևմտյան պատին կից:

Եկեղեցու ներսից՝ հյուսիսային պատին կից և արևմտյան խորանի արևելյան պատի հյուսիսային ծայրից ձգվում են ուղղանկյուն որմնամույթեր, որոնք միանալով կամարով գոտկում են ծածկի թաղը: Հյուսիսա-

յին պատի կենտրոնական մասում փորված է քառակուսան հեն խորշ:

Միակ մուտքը արևմտյան կողմից է. երեք լուսամուտներից մեկը բացվում է հարավային պատի կենտրոնական մասից, մեկը՝ արևելյան արքիդից, և մեկն էլ՝ արևելյան խորանի արևելյան պատից:



Նկ. 4. Յախացքար վանք.—Ս. Կարապետ եկեղեցին հյուսիսից

Ամբողջ հուշարձանը շարված է զանազան հանքաքարի տարրեր մեծությամբ անտաշ քարերով՝ կրաշաղախով միաձուլված: Կիսավեր վիճակում է. ամբողջապես քանդված է ծածկը, հարավային, արևելյան և արևմտյան պատերի վերևի մի քանի քարաշարերը և խորանների վերի մասերը: Քանդված մասերը փլատակների ձևով թափված են հուշարձանի ներսը և շուրջը:

5. **Մատուռ.**—Գտնվում է ս. Հովհաննես եկեղեցու հարավային կողմում, հիմնովին ավերակ վիճակում: Պահպանված հիմնապատերից, որոնք շարված են անմշակ որձաքարերով, նկատվում է, որ սուրբական ձևով կառուցված փոքր մատուռ է եղել: Արևելյան կողմից ունեցել է կիսակլոր արքիդ. միակ մուտքը հարավային կողմից է, նկատվում է, որ մուտքի եզրերը շարված են եղել մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով:

6. **Պարխպ.**—Չգտնվում է հուշարձանների այդ խմբի շուրջը, գրեթե քառակուսի ձևով: Պահպանվել է միայն արևելյան պատը, որն ուղիղ գծով ընդհանուր

և կից է վերը նկարագրված հուշարձանների արևելյան պատերին, բացի գավիթ-սրահից. պարսպի մյուս պատերը հիմնովին քանդված են և հազիվ նկատելի հետքեր են երևում (նկ. 2):

Պարսպի պահպանված արևելյան պատը շարված է ամրագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով: Գլխավոր մուտքը այդ պատի կենտրոնական մասից է՝ ս. Հովհաննես եկեղեցու և առաջին սրահի արանքից՝ լայն ու կամարակապ դարպասի ձևով, արտաքուստ գեղեցիկ քիվավոր ճակատով:

Բացի դարպասից, պարսպի այդ մուտքը սրահան է, որը հանդիսանում է հուշարձանների տվյալ խմբի մեջ մտնող երկրորդ սրահը: Վերջինս բաժանակնի մեծ է՝ ս. Հովհաննես եկեղեցու և առաջին սրահի անբողջ երկարությամբ: Ծածկը թաղակապ է, որի եզրերն անմիջապես հենվում են՝ արևելյան մասում ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային պատին կից, արքիդի երկարությամբ և ամբողջ սրահի քառակուսան մասի հարավային պատին կից կառուցած պատերի վրա, իսկ մնացած մասում ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային և առաջին սրահի հարավային պատերի մնացած մասերի վրա:

Այս սրահը նույնպես շարված է ամուր բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով, ըստ որի պատերի ներսի երեսները պատած են բազմաթիվ խաչերի քանդակներով և վիմագիր արանագրություններով:

Պարսպի, ինչպես և այդ վերջին՝ երկրորդ սրահի կառուցման ժամանակը և ուժեր են եղել նրանց կառուցողները, ստույգ հայտնի չէ: Դիտելով պարսպի արևելյան պատի տեղադրությունը և նրա վրա փորագրված արձանագրությունների տարբերքը, պարզ է դառնում, որ դրանք պետք է կառուցված լինեն ԺԲ դարում, համեմայն դեպք ոչ ուշ, քան ԺԳ դարի սկզբներին:

7. **Երկու ձիթհանները** գտնվում են նկարագրված հուշարձանախմբի արևմտյան կողմում, պարսպի ներսում: Երկուսն էլ հիմնովին ավերակ վիճակում են, որոնց շենքերի հազիվ նկատելի հետքերն են երևում՝ փոսերի ձևով, ուր ընկած են ձիթապտուղը տրորող երկու կլոր մեծ քարերը:

8. **Գերեզմանոցը** նույնպես տարածվում է հուշարձանների խմբի արևմտյան կողմում, պարսպի ներսում: Վերջինս նույնպես ավերակ վիճակում է, նշկատվում են այս ու այն կողմ թափված առանձին գերեզմանաքարեր և խաչքարերի քանդակազարդ բեկորներ:

9. **Վանական միաբանության բնակելի շենքեր.**—Գտնվում են պարսպի ներսում, արևմտյան պատին կից: Բոլորն էլ ավերվել ու վեր են ածվել փլատակների կույտերի, որոնց մեջ նկատելի է մի քարի պլան գլանաձև հաստ բունը և խարխիւր:

Յախացքար մենաստանի մյուս՝ արևելյան խումբը

Հուշարձանների այդ խումբը բաղկացած է երկու եկեղեցուց և մեկ գավթից. կից կան մի քանի գերեզմանարձան-խաչքարեր:

Այս երկու եկեղեցիներն էլ, ինչպես այդ մասին տեղեկացնում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը, կառուցել է Վարդիկ վարդապետը 1041 թվականին, որը հավանաբար վանքի առաջնորդը եղած լինի:

վաճք է, որի հատակագիծը արտաքուստ քիչ երկարաձիգ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ շնորհիվ անկյուններում տեղադրված մեկական խորանների, ստացել է խաչաձև տեսք՝ ուղղանկյուն խաչքներով:



Նկ. 5. Ցախացքար վանք.—Ս. Նշան եկեղեցի՝ հարավ-արևմուտքից

«Ցախացքար՝ բարձրահույս և սուրբ առաքինարան յորում ի 490 թվականին (Հայոց) ի թագաւորութեանն Գագկայ, հայր ոմն Վարդիկ անուն շինե պալծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբեթալարկ յանուն սուրբ Կարապետին, և զմիւսն սագաշեն, հրաշալի յօրինուածովք»⁸:

Եվ իրոք, այդ եկեղեցիներից մեկը գմբեթավոր է, իսկ մյուսը՝ սագաշեն, այսինքն՝ թաղակապ ծածկով, և կառուցված են «հրաշալի յօրինուածովք», դասվելով հայ ճարտարապետության հույակապ ու անգուգական կոթողների շարքը:

Բացի այդ, Ստեփանոս Օրբելյանից վերը մեջ բերված հատվածում առանձնապես հետաքրքիր է նրա այն վկայությունը, որի համաձայն այդ եկեղեցիները կառուցված են «Ի հանգստարանի առաջին սուրբ հարցն», այսինքն այն վայրում, ուր թաղված են եղել նրա՝ մինչև վերակառուցումը եղած առաջնորդների և վանքի միաբանության առաջատար կրոնավորների մարմինները:

10. Ս. Կարապետ եկեղեցի.—ԺԱ դարին խիստ բնորոշ և իր կառուցողական ձևերով այնքան հետաքրքիր այդ հուշարձանը գմբեթավոր մի կառուց-

Արևելյան խաչքներում տեղադրված է կիսակլոր արսի-դը՝ բարձր ու մասամբ դուրս շեշտված բեմով ու վեմբարով:

Բոլոր խորաններն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արսիդներ: Արևելյան կողմից խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ համապատասխանաբար հարավային և հյուսիսային խաչքներում, իսկ արևմտյան կողմի խորանների մուտքերը՝ այդ կողմի խաչքի մեջ՝ իրար դիմաց:

Խաչքների միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսապուները միանալով կամարներով կազմում են թաղակապ ծածկը, իրենց վրա կրելով գմբեթը՝ կլոր թմբուկով և ցածրանիստ վեղարով: Գմբեթի թմբուկի ամենավերին՝ քիվերին կից մասը եզրափակվում է երկրաչափական ձևերի զարդաքանդակներ ունեցող լայն շերտով:

Միակ մուտքը հարավային կողմից է՝ խաչքի կենտրոնական մասից՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով ու գեղազարդ քանդակներ ունեցող պարակալով (շրջանակ): Գոյություն ունեցող ինը հատ լուսամուտներից երեքական հատ բացվում են արևելյան և արևմտյան պատերից, որոնցից մեկական հատ՝ խորանների մեջ և մեկական հատ էլ՝ արևելյան ու արևմտյան խաչքների մեջ, ապա մեկ հատ՝ հարս-

⁸ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 339—40:

վային պատի մեջ՝ մուտքից վերև, և երկու հատ էլ՝ գմբեթի թմբուկի մեջ: Խաչքների և գմբեթի թմբուկի մեջ բացվող լուսամուտները մեծ են, բարձր ու լայն, իսկ խորանների մեջ բացվող լուսամուտները խիստ փոքր են: Բացի վերը նշված լուսամուտներից մի կտոր լուսանցք էլ բացվում է հարավային պատի ճակատային մասից:

Եկեղեցու լուսամուտներն ու կտոր լուսանցքն ունեն գեղեցկագարդ շրջանակներ, իսկ գմբեթի թմբուկի և խորանների լուսամուտները՝ պսակներ, ըստ որի զարդաքանդակները բուսական ու երկրաչափական բնույթի են՝ հյուսվածքաձև, վարդաձև, գնդիկավոր-մարգարտաշար և այլն, որոնք մշակված են շատ նորրոգ ու գեղեցիկ ձևով (նկ. 3):

Բացի վերը նկարագրած զարդաքանդակներից, հուշարձանի պատերն արտաքուստ զարդարված են տարբեր բնույթի այլ քանդակներով, որոնց մեջ աչքի են ընկնում տարբեր ձևերով մշակված խաչաձև քանդակները: Խիստ բնորոշ և հետաքրքիր է հյուսիսային պատի ճակատամասում եղած մեծ բարձրաքանդակը, որ պատկերված է աղյուծ՝ ճանկերի մեջ առած մի մեծ կենդանի (եզ կամ գոմեշ, նկ. 4): Արևելյան և հարավային պատերի մեջ, արտաքուստ կամ երկուսն էլ եռանկյունաձև խորն ու մեծ խորշեր (նիշեր), որոնց կամարակապ գագաթները պատած են զանազան բնույթի գեղեցիկ զարդաքանդակներով:

Ամբողջ հուշարձանը կառուցված է գորշ գույնի բազալտի սրբատաշ մեծ քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

11. Մենաստանի այս խմբի երկրորդ եկեղեցին, որն արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Նշան, գտնվում է ս. Կարապետ եկեղեցու արևելյան կողմում: Սա միանավ բազիլիկ ձևով կառուցված մի փոքրիկ շենք է, շարված գորշագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով: Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր արսիդ՝ ցածրադիր բլմով ու վեմքարով: Միակ փոքրիկ պարզ մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է գավթի մեջ: Մի փոքր կլոր լուսանցք բացվում է արևելյան կողմից՝ արսիդի մեջ: Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով, որոնց մեծագույն մասը թափված է:

12. Գավթիքը, որը գտնվում է ս. Նշան եկեղեցու արևմտյան կողմում՝ կից, շատ փոքր է, քառակուսի հատակագծով, հանդիսանում է եկեղեցու անբաժանելի մասը՝ որպես մի տեսակ նախասրահ: Այդ վերջին հանգամանքը հավանական է դարձնում, որ գավթիքը պետք է կառուցված լինի եկեղեցու հետ միաժամանակ, այսինքն՝ 1041 թվականին:

Գավթիքը նույնպես շարված է գորշագույն բազալտի մաքուր տաշած քարով, կրաշաղախով միաձուլված: Ծածկի առաստաղը հարթ մակերեսով է և ամբողջապես պատած է աստղաձև ճրքագեղ զարդաքանդակներով: Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կամարակապ ճակատով:

Արևմտյան պատին կից, արտաքուստ, մուտքի երկու կողմերում, նույն գորշագույն տուֆի սրբատաշ մեծ քարերով, դռան բարձրության հավասար, հետա-

գայում կառուցված է ընդհանուր պատվանդան, որի արտաքին եզրերին կանգնեցրած են երկու խոշոր խաչքարեր: Վերջիններս շքեղ քանդակազարդված են, ըստ որի արտաքին եզրերի քանդակները երկրաչափական բնույթի են՝ քառակուսիների մեջ վերցրած, իսկ ներսի մասի՝ խաչի ու նրան՝ հարակցվող մասերի քանդակները բուսական-ժողկազարդ բնույթի են: Բոլորն էլ մշակված են շատ գեղեցիկ և վերին աստիճանի նորրոգ ձևով:

Երկու խաչքարերի արանքում ստեղծված է բարձր ու լայն, ուղղանկյուն խորշ՝ զույգ կամարաձև գագաթով: Այդ խորշի հյուսիսային եզրաշերտի ծայրին հենած գեղաձև պատվանդանը և խորշի ճակատամասի շարվածքները հավաստի են դարձնում, որ գավթի արևմտյան պատին կից այդ ամբողջ կառուցումը յուրահատուկ մի կոթող է, ըստ որի խորշի կառուցման կոնստրուկցիան որոշակի կերպով հիշեցնում է Սիսիանի շրջանի Աղուդի գյուղում եղած կոթողը: Դրանցից էլ հետևում է, որ այս գավթիքը պետք է հանդիսացած լինի որպես դամբանատուն:

13. Մատուռ.—Վերը նկարագրված գավթի և մասամբ ս. Նշան եկեղեցու տանիքների վրա, կոթողաձեղ կառուցվածքին կից, շինված է մի շատ փոքր մատուռ: Սրա հատակագիծը ուղիղ քառանկյունի է, ծածկը՝ թաղակապ, արևելյան կողմից ունի փոքրիկ արսիդ, որ բացվում է նաև մի շատ փոքր լուսամուտ: Կառուցված է նույն գորշագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով, տանիքը պատած է սալաքարերով:

14. Գերեզմանոց.—Տարածվում է ս. Կարապետ և ս. Նշան եկեղեցիների շուրջը: Գերեզմանաքարերը բոլորն էլ նույն գորշ գույնի բազալտից են, շատ մեծ և տարբեր ձևերով մշակված, ինչպես օրինակ՝ քառակող հարթ երեսով, օրորոցաձև և եռանկյունաձև տանիքներով՝ բարձրադիր և այլն:

Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր, ոմանք բավականին մեծ, որոնք սովորական ձևով շքեղորեն քանդակազարդված են: Դրանցից չորս հատ կանգուն վիճակում գտնվում են ս. Կարապետ եկեղեցու հարավային կողմում:

Նկատվում է, որ բավականին ընդարձակ գերեզմանատուն է եղել, իսկ այժմ գտնվում է քայքայված ու ավերակ վիճակում, նրա մի մասը քանդել և վեր են ածել վարելահողերի, որ գերեզմանաքարերն ու խաչքարերը տեղահան արել և կուտակել են այս ու այն կողմում: Գերեզմանոցի մնացած մասի տապալանաքարերից ոմանք տեղաշարժված են, իսկ խաչքարերը՝ վար ընկած գետնին: Տեղում պահպանված Գերեզմանաքարերը թաղված են գետնի մեջ և մեծ մասամբ ծածկված են հողով: Գերեզմանաքարերի և խաչքարերի զարդաքանդակների մշակման ձևերը բնորոշ են Ժ—ԺԵ դարերին:

Գ. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցախացքար վանքի հուշարձանների վրա փորագրված արձանագրությունները բավականին մեծ թիվ են կազմել, սակայն դրանց մի մասն է միայն պահպանվել: Արձանագրությունների որոշ մասը, որոնք

փորագրված են եղել քանդված մասերի վրա, չենքք քանդվելու ընթացքում ջարդոտվել են և վեր ածվել փլատակների, ծածկվել հողի հաստ շերտով: Նկատելի է նաև, որ հուշարձանների կանգուն մասերի վրա փորագրված որոշ արձանագրություններ էլ հետագայում ծածկվել են այդ փլատակներով ու հողմերի կուտակված հողի հաստ շերտով, որոնք պեղել-բացելուց հետո հնարավոր կլինի ընդօրինակել:

Մեջ ենք բերում առկա պահպանված արձանագրությունները՝ վերծանված ձևով, պահպանելով տողերի դասակարգման ձևը:

Արևմտյան խումբ

Ա. Աստվածածին եկեղեցու հարավային կողմի սրահի արևելյան պատի վրա, արտաքուստ.

1. Յանուն Աստուծոյ եւ Վարդան միաբան—
2. եցա ի սուրբ Ուխտս եւ ետու զիմ տերունի
3. Սուրբ Նշանն եւ գրակալք. եւ միաբանքս
4. սահմանեցին Բ ար պատարագ ի տ—
5. աւնի սուրբ Գեվորգին: Կատարիչքն արհմն—
6. ին յաստուծոյ եւ խափանիչքն դատին:

Բ. Նույն սրահի ներսի կամարի վրա.

Գրիգոր քահանայ յիշեցէք ի քրիստոս:

Գ. Նույն Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմի գավիթ-սրահում եղած մի տապանաքարի վրա.

Ջազնին լընտրեալսն և զբաշնքի զարկանսն զպարոն Ուքանն յիշեցէք. թվին 22Է (1326):

Դ. Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ԾԱԿԱՍՏԱԿԱԼ ԲԱՐԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ

1. Թ:Ո:Կ (1211), եւ Գրիգ—
2. որ որդի Սմբատս Ու—
3. տնի տէր գերկու Դոնիս տ—
4. նկեցի ետու սուրբ Յովանէ—
5. ս, գրեցա ի տարին: ԺԲ աւ—
6. ր ժամ. որ գրոյս հակառ—
7. ակի. Յ. Ժ. Ը. Հայրապետ—
8. աքն ճգոված եղիցի:

Ե. ՆՈՒՅՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ
ԹՎ. ՆԼԸ (989)

Զ. ՆՈՒՅՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԻՎԻ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ

1. Սուրբ ուխտիս կամակցու (թեամբ)....—
2. ս տուեցի սուրբ Յո—
3. վանէս՝ Աղաւոր յիշեցեք:

Է. ՊԱՐՍՊԻ ԴԱՐՊԱՍԱՊԱՏԻ ԾԱԿԱՍՏԻՆ

1. Թ. ՈՀԱ (1222) նորոգեցաւ սուրբ Աստուածածինս ի ձեռն Գրիգորոյ և սուրբ Հարքս:

2. Գրեցին իւր տանիս Ա. ժամ. կատարիչ հ(րաւանիս) արհմնն յԱստուծոյ:

Ը. ՆՈՒՅՆ ԴԱՐՊԱՍԻ ՍՐԱՀԻ ՆԵՐՍՈՒՄ՝ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

1. Կաման Աստուծոյ, եւ Էաշի, որդի Հասանա, թոռն Պոռ
2. շայ միաբանեցաւ սուրբ ուխտիս Յաղաց քարո
3. և ետու յիմ հայրենեաց ի Սրկղունս զմեր
4. ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրովն:
5. Մեր եղբայրն՝ տեր Արպելի Ովանէն և միաբանքն
6. ի տարին սահմանեցին: Դ: պատարագ մեզ եւ
7. ծնողաց մերոց, ամուսնոյն իմոյ
8. Մամախաթունին՝ ի տունի Դավթի և Յակոբա:
9. Կատարիչքն արհմնն յԱստուծոյ:
10. Ի թվ. 24Զ (1317):

Թ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻ ՄՈՏ

1. Կաման Աստուծոյ, իշխանութեամբ Իւանէի, Հայրապետ—
2. ութեամբ Տեր Ներսէսի, եւ Էնսոս, որդի Սամանայ, ամուսին
3. իմ Արուսիսաթունս թաղեցաք մեր Սամսոն որդիս ի վա—
4. նքս. մեր էլ գերեզման հարաք, մատաղ արարաք և էաք մեր
5. առ Քրիստոս ի հրեշտակաբնակ սուրբ ուխտս Յաղանի քար մեծ
6. պարոնաց հրամանաւ Արտաքինեցիք Մովսիս Արծախեց—
7. ին ամէն հարկէ ազատ. Սիրկանց այգին գնին Բուրղա թուրքին պարտքն արհմ գերել
8. ողջ... գերի թափեցին, այգիս չարեքն իմ եղբարն տվաք: Գ: չարեքս: Ա: իմ հոգոյս, Ա: Արու—
9. զխաթունի, :Հ: Ա: Սամսոնա, :Հ: Գ: տվաք ի սուրբ Յովհաննէս վասն ծովացեալ մեղաց մերոց: Սպաս—
10. աւոր Ներսէս (և) այլ միաբանքս տարին :Զ: պատարագ տվին մեզ (և) ծնողաց մերոց: Ով հակառակի՝ դ—
11. ատի Աստուծոյ՝ ամեն. քածին Ողախն (և) այլ խաչահանացն առցէ: Թ: Պ: Ժ: Զ: (1367):

Ժ. ՆՈՒՅՆ ՍՐԱՀԻ ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ Ի ԹՎԻՆ 24Զ (1317)

1. Կաման Աստուծոյ եւ Գրարիկ միաբանեցաւ սուրբ Ու—
2. խտիս Յաղաց քարո և ետու ի հալալ ընչից
3. Իմոց Ստեփանէք զԱրլականց այգոյն (արձանագրության շարունակությունը ծածկված է փլատակներով):

Արևելյան խումբ

ԺԱ. Ա. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ԾԱԿԱՍՏԱԿԱԼ ՎՐԱ

1. Ողորմեայ Քրիստոս Աստուած Վարդկայ ի Քուժ գալըստեանդ որպես առաքակին՝ ի խաչին և

2. Մարտարին՝ ի տաճարին: Ես վարդիկ հայր ստացայ զսուրբ Կարապետս:
3. Արդ՝ որ սուրբ Սարգիսս ար յայս: Ե: եկեղեցուն ժամ վարդկա չառնի
4. Սուրբ Կարապետս եղիցի նզովեալ. իսկ առնելին արհնամ է յԱստուծոյ:

ԺԲ. ՆՈՒՅՆ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵՎՈՒՄ,
ՇՐՋԱՆԱԿԱԾԵՐՏԻ ՎՐԱ

Տեր Աստուած ողորմես Գագկայ ի Քում գալըստեանդ և պահես ի չարէ:

ԺԳ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻՑ ԱՐԵՎԵԼՔ՝
ՇԱՐՈՒՆԱԿԱՔԱՐ

(արձանագրության սկզբի երեք տողերը խիստ եղծված են ու անընթեռնելի):

4. Յիմոց կամ յատարաց՝ մասն ու բաժին ընդ
5. Յուդաի եղիցի: Աստուածածին տունին ժամն ինձ առնեն:

ԺԴ. ՆՈՒՅՆ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ՝
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

Ի թվին 2...: Այս գիր ճշմարիտ յուսոյ յիշատակ հոգւոյ (մեծի) Տարսաիճի՝ իշխանաց իշխանի, որդի մեծին Լիպարիտի, եղբայր Սմբատայ արքայի՝ կողմնակալի այսմ նահանգի, որ իշխեցող է ի Բարգուշատայ մինչ ցԳառնի, սահմանք մեր Երասխայ, մեր յոյս Քրիստոս է... զհոգւոց մերոց տուաք ի սուրբ ուխտս զՅախացքարի՝ հողն ի հայրենեաց մերոց, ի Գեղարքունի զգեղն Գառնակեր, և ի Մճռակածոր զմեր ձեռատունկ այգին...: Սպասաւորք՝ Տեր Գրիգոր և այլ միաբանք սահմանեցին Զատկի սուրբ տաճին առաքելոց Պետրոսի և Պաղոսի եկեղեցիս ամենայն պատարագն Ա. աւոր ինձ առնեն՝ Տարսաիճիս, Ա. արն ամուսնոյ իմոյ Մինայ խաթունին: Արդ՝ թէ ի մերոց կամ յատարաց կամ յիշխանաց հակառակի, ՅԺԸ հայրապետացն նզոված եղիցի...:

ԺԵ. ՆՈՒՅՆ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ՝
ԱՐԵՎԱՍՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ

Թվին ՈՀԹ (1230). զԱմուսնս յիշեցեր ի Քրիստոս⁹:

ԺԶ. Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՏ, ՄԻ
ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ

Այս է հանգիստ աղախնոյն Ալատա:

ԺԷ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՄԻ ԽԱԶԱՐԻ ՎՐԱ

Թվ. 2Բ (1253):

⁹ Եկեղեցու դուռը կողպած լինելու և ձեռքի տակ բանալի չունենալու պատճառով վերջին երկու արձանագրությունները (ԺԴ և ԺԵ) մեջ ենք բերում Ս. Զալալյանից.—Ժամապարհորդության ի մեծն ՀԱՅԱՍՏԱՆ, մասն երրորդ:

ԺԸ. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՄՈՒՏՔԻ
ՃԱԿԱՏԱՄԱՍՈՒՄ, ԱՐՏԱՔՈՒՍ

1. Ես հայր վարդիկ, առաջնորդ սուրբ ուխտի Ցաղաց քարի, շինեցի զսուրբ Կաթողիկէս և կանգնեցի զնշան սուրբ երրորդութեանն վա-
2. սն իմ հոգւոյն փրկութեան թերևս ողորմութիւն գտից ի յապագահն ի տիեզերակալ հրապարակին, ուր բանքն ըսպա-
3. ոին և գործքն թագաւորին: Արդ՝ ով սրբազարդ քահանայք որք զսուրբ պատարագն համարձակ մատուցանէք զիս
4. յաղաթս յիշեցեք առաջի զէնլոյն Քրիստոսի, եւ քանի ի Քրիստոսի հաստատութեան է՝ ամէն շաբաթ ար զժամն ինձ առնէ
5. այն քահանան որ ի սեւս պատարագն մատուցանէ:

ԺԹ. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ՃԱԿԱՏԻՆ,
ԱՐՏԱՔՈՒՍ

1. Ի: ՇԺ: Թ: (1061). կամ եղև ինձ հայր վարդկա և սուրբ
2. Եղբայրս գրել զյիշատակս վասն վարդա՝ Զաքա-
3. րեի որդո, որ մեծ յուսով երես զԲվեայ մարգ և Սեղա-
4. ի այգին, այլ շատ իրք. եւ մեր գրեցաք՝ որչափ ի հաստատուն
5. է եկեղեցիս, զվարդավառին շաբաթն: Ժ: Ե: ար ժամ:
6. Որ խափանէ :Յ: Ժ: Ը: Հայրապետացն նզոված է և նորա մեղացն տեր է:

Ի. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՆԵՐՍՈՒՄ,
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

1. Յանուն Աստուծոյ, ես Մարտիրոս զիմ եղեգեաց հայր-
2. էնի հողն՝ զՓորատապն ինչ կա, ու մեռանէի՝ Յա-
3. դաց քարի սուրբ Յովաննէսս տոյի իմ հաւրն անդարձ
4. անցեր, որ իմ մահուն յետև Ցաղացքարս և նո-
5. ր ու ոչ ում ոչինչ հաշիվ չկա հետ . . . (ո)-
6. վ որ զիմ անդարձն հետ դարձուցանէ ՅԺԸ (Հայր)-
7. ապետաց նզոված է:

ԻԱ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ

1. Յանուն Աստուծոյ, ես Գորգ՝ Դեղին որդի . . .
2. սրտի հուժարութեամբ տվի զիմ գեղն զ . . .
3. ին Աստուածածնին եւ էտվի սուրբ . . .
4. ո առաջնորդութեամբ սուրբ եղ . . . ի ցեղէն ես
5. տվի վասն ծովացեալս և . . . ու ողորմութիւն
6. գտից ես զամուսնին . . . ժամ առ-
7. նեն: Ով այս բանին հակառ (կա ՅԺԸ) Հայրապետաց նզոված է: